Ո Ի Ղ Ե Ց Ո Ւ Մ Ց

Էսքիզային նախագծի համաձայնեցման

/շինարարության թույլտվություն չպահանջող ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների շինարարական աշխատանքների իրականացման համար/

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման Հավելված N 4-ում աստղանիշով (*) նշված օբյեկտների /շինարարական աշխատանքների/ համար կազմվում է էսքիզային նախագիծ և համաձայնեցվում՝ եթե այդ աշխատանքները կատարվում են քաղաքային համայնքների կամ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների ընդհանուր օգտագործման տարածքներում կամ փողոցահայաց հատվածներում.

Ց Ա Ն Կ
ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ (I ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎՈՒՄ Է ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

(ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման Հավելված N 4-ում աստղանիշով (*) նշված՝ աշխատանքներ)

1.ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(*) արտաքին դռների և դարպասների նույն տեղում փոխում, փոխարինում, վերականգնում և վերանորոգում,
(*) արտաքին լուսամուտների փոխում, փոխարինում, արտաքին պատերի բացվածքներում ցուցափեղկերի փոփոխություն,
(*) պատշգամբների բազրիքների արտաքին տեսքի ձևափոխում՝ առանց կոնստրուկտիվ փոփոխությունների.
(*) թեքահարթակների իրականացում գոյություն ունեցող սանդղամուտքերում.
(*) երեսապատումների նորոգում, փոխում, փոխարինում,
(*) շենքերի ճակատապատերի ներկում,
(*) քիվերի և այլ դեկորատիվ էլեմենտների վերականգնում,
(*) ծեփածո էլեմենտների վերականգնում,

2. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(*) մայթերը և շենքերը շրջափակող սալահատակների փոխում, փոխարինում.
(*) մայթերի առանձին եզրաքարերի ուղղում, վերաշարում, փոխում, փոխարինում.
(*) մայթերն ու շենքերը շրջափակող տարածքների ասֆալտապատում և նորոգում՝ բացառելով հատակագծային նիշերի փոփոխությունները.
(*) ընդհանուր օգտագործման տարածքներում փոքր ճարտարապետական ձևերի և կառուցվածքների (ծածկարան, ճոճանակ, ցայտաղբյուր, խաղահրապարակ, նստարաններ, աղբարկղ և այլն) տեղադրում.
(*) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց և ճաղեր) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

ԴԻՄՈՒՄ

ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ.596-Ն որոշում, N 5 հավելվածի N 4-1 ձևով

- **Դիմումին կցվում են՝**

1.Անձնագրի պատճեն ֆիզիկական անձի դեպքում, պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճեն իրավաբանական անձի դեպքում,
2.Անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը.
3.Էսքիզային նախագիծը՝ 3 օրինակից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Պատմամշակութային հուշարձանների փոփոխմանն առնչվող դեպքերում եռօրյա ժամկետում էսքիզային նախագիծը և փաստաթղթերը ներկայացվում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմին՝ համաձայնեցման, որի՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2338-Ն որոշմամբ սահմանված 19-օրյա ժամկետում ներկայացված կարծիքը հիմք է դիմողին համաձայնություն տալու, դիտողություններով լրամշակման վերադարձնելու կամ մերժելու համար:

դիմումը ստանալու օրվանից՝ ***5-օրյա ժամկետում***

Դիտողություններով վերադարձված և դրանք հաշվի առնելով լրամշակված նախագծային փաստաթղթերի ներկայացում

դիմումը ստանալու օրվանից՝ ***3-օրյա ժամկետում***

ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ

ՄԵՐԺՈՒՄ